


HBV ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ և ՀՀ-ՈՒՄ

Հեպատիտ B վիրուսով (HBV) վարակվածությունը իր բարձր հիվանդացությամբ և մահացությամբ հանդիսանում է համաշխարհային առողջապահության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Աշխարհում 2 միլիարդ մարդ ունի տարած կամ ընթացիկ HBV վարակի դրոշմներ: Ենթադրվում է, որ աշխարհում ամեն տարի HBV-ի բարդությունների հետևանքով մահանում է մոտ 650,000 մարդ: Քրոնիկ B հեպատիտով է պայմանավորված հեպատոցելյուլյար կարցինոմայի (ՀՑԿ) դեպքերի մոտավորապես 45%-ը և ցիռոզի 30%-ը: ՀՑԿ-ն հանդիսանում է տղամարդկանց շրջանում մահվան հիմնական պատճառներից մեկը:



Բուժում չստացած քրոնիկ B հեպատիտով անձանց հետազոտությունները ցույց են տալիս, որ ցիռոզի զարգացման կումուլյատիվ ռիսկը 5 տարվա ընթացքում կազմում է 8–20%: Ցիռոզով անձանց մոտ լյարդային անբավարարության ամենամյա ռիսկը կազմում է 20%, իսկ ՀՑԿ ամենամյա հիվանդացությունը, կապված հեպատիտ B-ի հետ, բարձր է՝ <1%-ից մինչև 5%-ի միջակայքում: Բուժում չստացած դեկոմպենսացված

ցիռոզով պացիենտների մոտ ապրելիությունը 5 տարվա ընթացքում կազմում է 15–40%:

Առողջապահության համաշխարհային ասամբլեան հավանություն է տվել առողջապահության ոլորտի գլոբալ ռազմավարությանը՝ մինչև 2030 թվականը վերացնել վիրուսային հեպատիտները որպես հանրային առողջության սպառնալիք, նպատակ ունենալով նվազեցնել նոր վարակները 90%-ով և մահացությունը 65%-ով:

Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին HBsAg-ի տարածվածությունը գնահատվել է 2%: 2017 թ.-ին ըստ տարիքի և սեռի բաշխումը որոշելու համար օգտագործվել են ազգային ռեգիստրի տվյալները՝ պատվաստանյութերի վերաբերյալ տվյալների հետ միասին: HBsAg-ի տարածվածությունը 2017 թ.-ին ՀՀ ընդհանուր բնակչության շրջանում կազմել է 1.6% (46.500 վարակված անձ): HBeAg-ի առկայությունը մանկածնության տարիքի կանանց շրջանում գնահատվել է 13.3%: Վարակված բնակչության շրջանում 23% -ի մոտ գնահատվել է բարձր վիրուսային բեռ: Հայաստանում 1999 թ.-ից սկսած իրականացվում է հեպատիտ B-ի դեմ եռակի դոզայով և ծննդաբերությունից հետո պատվաստում՝ 2002 թ. հասնելով ավելի քան 90% ընդգրկման: